

## ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ ԵՎ 1958 Թ. ՊԱՊԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Լիլիթ Պողոսյան*

Հայ կաթողիկե և հռոմեական կաթոլիկ եկեղեցիների ժամանակակից պատմության նշանավոր դեմքերից է Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանը (իտալերեն՝ Agagianian Gregorio Pietro):

Կարինից գաղթած և հայաշատ Ախալցխայում հաստատված Հարություն Աղաջանյանի ընտանիքում 1895 թ. սեպտեմբերի 18-ին ծնվեց Ղազարոս Աղաջանյանը: Շուտով մահանում է Հարություն Աղաջանյանը, և երեք երեխա՝ Ղազարոսը իր ավագ եղբայր Պետրոսի և քույր Եղիսաբեթի հետ մնում են մոր՝ համեստ և բարեպաշտ Իսկուհի Սարուխանյանի հովանավորության ներքո: «Իմ հայրը, ով ներգրավված էր մի քանի մանր բիզնեսներում, մահացավ, երբ ես հինգ տարեկան էի, ուստի ես նրան չեմ ճանաչել», - ասել է կարդինալ Աղաջանյանը մի հարցազրույցի ժամանակ<sup>1</sup>:

Ղազարոսը նախնական կրթություն ստացել է Կարապետյան ծխական դպրոցում, որտեղ աչքի է ընկել ուսման, կրթության և եկեղեցու նկատմամբ սիրով:

Ինչպես վկայել է նրանց ժողովրդապետը՝ Հովսեփ Ծ. Վ. Սարուխանյանը՝ փոքրիկ Ղազարոսը շատ ուշիմ, կենսունակ և զվարթ մանուկ է եղել: Եվ երբ նրանց այցելության էր գնում Կովկասի հայ կաթողիկական առաքելությունների հոգևոր կառավարիչ գերապատիվ Սարգիս Տեր-Աբրահամյանը, Ղազարոսը շատ անգամներ է նրան խնդրել իրեն վարդապետության ուղարկել<sup>2</sup>:

1906 թ. հոկտեմբերին Սարգիս Տեր-Աբրահամյանը տարրական կրթություն ստացած 11-ամյա Ղազարոսին ուղարկում է Իտալիա՝ Հռոմ՝ ուսումը շարունակելու: Փայլուն առաջադիմությամբ ավարտելով վարժարանը՝ Ղազարոսը ուսումը շարունակում է Ուրբանոս VIII պապական համալսարանում (Pontificia Università Urbaniana), այնտեղ ուսումնասիրելով

<sup>1</sup> Healy P. F., The gentile Armenian, Catholic digest, July, 1961, p. 98.

<sup>2</sup> Հոռնկլա, Թիվ 13, Հոռն, 1967-1968, էջ 2:

փիլիսոփայություն և աստվածաբանություն: Իր անմնացորդ ազնվության, մտավոր հնարավորությունների և մարդկային վեհանձնության շնորհիվ վաստակում է իր դասընկերների, ուսուցիչների և վերադասի ջերմ համակրանքը:

1917 թ. դեկտեմբերի 23-ին 22 տարեկան Հասակում Ուրբանյան վարժարանում Պետրոս Արք. Գոյունյանի ձեռքով նա ձեռնադրվում է քահանա՝ վերցնելով Ֆրանցիսկոս անունը: Արդեն սկսվել էր Առաջին համաշխարային պատերազմը, որի պատճառով էլ Աղաջանյանը մնում է Հռոմում: Շուտով Լաթերանյան համալսարանում սկսում է ուսումնասիրել քաղաքագիտություն և եկեղեցական իրավունք: 1919 թ. ստանում է քաղաքական և եկեղեցական իրավունքի մասնագետի վկայական: Նույն թվին վերադառնում է Կովկաս մինչև 1921 թ. ծառայում Թիֆլիսի Գրիգոր Լուսավորիչ կաթողիկե եկեղեցում: Այստեղ նա հայ մանուկների համար հիմնում է Ղ. Ալիշան դպրոցը՝ հայ մանուկների միտքն ու սիրտը մշակելու համար<sup>2</sup>:

1921 թ. Լևոնյան վարժարանի տնօրեն գերապատիվ Սարգիս Տեր-Աբրահամյանի առաջարկով Աղաջանյանը վերադառնում է Հռոմ և նշանակվում վարժարանի փոխտնօրենի պաշտոնում, որպեսզի օժանդակեր իր ուսուցչին: 1932 թ. նա պիտի գլխավորեր այդ ուսումնական հաստատությունը: Պիոս ԺԱ պապը նրան շնորհում է «Գաղտնի Սենեկապետի» պատվաստիճան:

Վարժարանում իր աշխատանքին զուգահեռ Ֆրանցիսկոս Աղաջանյանն ուներ նաև մի շարք կարևոր այլ պարտականություններ և հանձնարարություններ: 1928 թ. Աղաջանյանը դառնում է Արևելյան եկեղեցիների հարցերով կոնգրեգացիայի խորհրդական և Հռոմեական կաթոլիկ եկեղեցու արևելյան կանոնական իրավունքի կոդիֆիկացիայի հանձնաժողովի անդամ: Հակառակ իր բազմազբաղությանը, նա սիրով հանձն է առել 1921-1937 թթ. Անարատ Հղության հայ քույրերի միաբանության խոստովանահայրությունը և կրոնի դասավանդումը:

Եվ այսպիսի պայմաններում Հռոմեական կաթոլիկ եկեղեցին գնահատեց տաղանդավոր և էներգիայով լեցուն հայ հոգևորականի գործունեությունը: 1935 թ. հուլիսի 21-ին Ֆրանցիսկոս Աղաջանյանին Տեր-Աբ-

<sup>1</sup> **Акопян В. З.**, Кардинал Григор-Петрос Агаджанян, Теодицея N 2, 2011, с. 4.

<sup>2</sup> Բազմավեպ, N 3-5, 1946, (Բացառիկ թիվ), էջ 65:

րահամյանը օժուժ է եպիսկոպոսի աստիճանում Լևոնյան վարժարանի սբ. Նիկողայոս եկեղեցում: Ապա Պիոս ԺԱ Պապի կողմից նշանակվում է Լիբանանի Զմմառի պատրիարքական միաբանության հոգևոր վերակացու: Նույն թվականի օգոստոսի 8-ին հասնում է Բեյրութ Զմմառի վանք և օգոստոսի 20-ին նախագահում 1934 թ. կանոնադրությամբ սահմանված Զմմառի վանքի վարչության առաջին ընտրությունը: Հոկտեմբերի սկզբին վերադառնում է Հռոմ շարունակելով իր ծառայությունը և ուսուցչությունն Ուրբանյան վարժարանում:

Իր եպիսկոպոսության երկու տարին լրանալուց հետո Հայ կաթողիկե եկեղեցու երջանկահիշատակ Արփիարյան կաթողիկոսի մահից հետո 1937 թ. ընտրվում է Հայ Կաթողիկե Տանն Կիլիկիոյ Աթոռի գահակալ: Այս բարձր կոչմանն ու պաշտոնին նա մնացել է մինչև 1962 թ. օգոստոսի 25-ը:

1946 թ. փետրվարի 18-ին Պիոս ԺԲ Պապի կողմից Գրիգոր Պետրոս Աղաջանյանին շնորհվում է ծիրանագույն գլխարկ և նա դառնում է տիտղոսակիր կարդինալ (S. Bartholomaei in Insula տիտղոսով):

1951 թ. հոկտեմբերին կարդինալ Աղաջանյանը նախագահում է Քաղբեղոնի տիեզերական ժողովը: 1955-ին Պիոս ԺԲ պապը նրան նշանակում է արևելյան եկեղեցու Կանոնագրքի խմբագրման կազմող հանձնաժողովի նախագահ:

1958 թ. նույն քահանայապետը նրան է վստահում Հավատի տարածման կոնկրետագիտի նախագահողի պաշտոնը: Նույն թվականին մահանում է Պիոս ԺԲ պապը: Լինելով Կաթոլիկ եկեղեցու Հավատի տարածման հանձնաժողովի նախագահ իր ենթակայության տակ են եղել 122 արքեպիսկոպոսական թեմեր, 528 եպիսկոպոսական թեմեր, 6 աբբայարաններ և 142 առաքելական առաջնորդություններ: Վերոհիշյալ թեմերում եղել են ավելի քան 83 մեծ կղերանոցներ 6500 ժառանգավորներով, և 392 փոքր ճեմարաններ՝ 34-750 ժառանգավորներով:

1970 թ. Աղաջանյանը հրաժարվում է Հավատի տարածման ժողովի մեջ իրեն վստահված պաշտոնից, ելնելով իր վատթարացող առողջական վիճակից: Նույն թվին նրա միջնորդությամբ Պետրոս Զ. Պապը Վատիկան է հրավիրում Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա. Վեհափառին: Վեհափառի և Պապի հանդիպումը տեղի է ունենում Աղաջանյանի ընկերակցությամբ Սիբստինյան մատուռում: Պապի հետ հանդիպման երկրորդ օրը Վեհափառը և նրա ընկերակցող եկեղեցական ու քաղաքա-

կան բարձր պաշտոնյաները հյուրընկալվում են Աղաջանյանի մոտ Լևոնյան վարժարանում: Շնորհիվ կարդինալ Աղաջանյանի Լևոնյան վարժարանը դառնում է և մնում Հայաստանից և սփյուռքից ժամանած հայերի հանդիպման վայրը:

Աղաջանյանի առողջական վիճակը գնալով ծանրանում է և 1971 թ. մայիսի 16-ին «բարիքներ կը տեսնեմ» մրմնջալով՝ ավանդում է հոգին : Երջանկահիշատակ Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյան կաթողիկոսի մարմինը հանգչում է Լևոնյան վարժարանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատուռի դամբանի մեջ: Նրա հուղարկավորությանը հարազատներից մասնակցում էր միայն քույրը՝ Եղիսաբեթը, որին եղբայրը տարիներ առաջ Ախալցխայից տեղափոխել էր Հռոմ:

Կարդինալ Աղաջանյանի ողջ կյանքը անմնացորդ նվիրում է սուրբ եկեղեցուն և ազգին: Նրա կենսագրության հետ ծանոթացումը հոգի է մաքրում և վերադարձնում ազգային արմատներին:

\*\*\*

1958 թ. հոկտեմբերի 9-ին իր մահկանացուն է կնքում Պիոս ԺԲ պապը: 1958 թ. կոնկլավում կարդինալ Աղաջանյանն ամենահավանական պապ ընտրվելու թեկնածուներից (papabili) էր: Այդ մասին էին հայտնում մի շարք երկրների թերթեր և հեռուստատեսություններ: Կոնկլավը, որ տևում է հոկտեմբերի 25-28, Հռոմի պապ է ընտրվում Հովհաննես 23-րդը ( Անջելո Ռոնկալին):

Կոնկլավի մասնակիցների մասին մենք ունենք հավաստի տեղեկություններ: Կարդինալները հիսուն հինգն էին Պիոս ԺԲ-ի մահվան ժամանակ: Սակայն մինչ նոր պապի ընտրությանը մասնակիցներից երկուսը ևս կնքեցին իրենց մահկանացուն՝ Չելսիո Կոստանտինին և Էդվարդ Ալուսիուս Մունեյը: Հաջորդիվ դեռ պիտի անդրադառնանք Չելսիո Կոստանտինի հայտնի նամակին: Եվ երկու կարդինալ էլ չկարողացան մասնակցել ժողովին, որոնց խոչընդոտեցին իրենց երկրների սովետական ռեժիմը: Ժոզեֆ Մինձենթին՝ Հունգարիայի Էստերգոմի արքեպիսկոպոսը, ով քաղաքական ապաստան էր գտել Բուդապեշտի ԱՄՆ դեսպանատանը և Ալոժգաժ Ստեփինաքը՝ Հարավսլավիայի Չագրեբի արքեպիսկոպոսը, ով սովետական իշխանության հրամանով գտնվում էր տնային կալանքում Հարավսլավիայի իր հարազատ գյուղ Կրասիքում: Այսպիսով կոնկլավի աշխատանքներին մասնակցեց հիսուն մեկ կարդինալ:

Կոնկլավին մասնակցած կարդինալները ըստ երկրների՝

Իտալիա՝ 17, Ֆրանսիա՝ 6, Բրազիլիա՝ 3, Իսպանիա՝ 3, Արգենտինա՝ 2, Կանադա՝ 2, Գերմանիա՝ 2, ԱՄՆ՝ 2, Ավստրալիա՝ 1, Բելգիա՝ 1, Չիլի՝ 1, Չինաստան՝ 1, Կոլումբիա՝ 1, Կուբա՝ 1, Էկվադոր՝ 1, Հնդկաստան՝ 1, Իռլանդիա՝ 1, Մոզամբիկ՝ 1, Լեհաստան՝ 1, Պորտուգալիա՝ 1, Սովետական Միություն՝ 1, Սիրիա՝ 1:

Հովհաննես 23-րդը հայկական վարժարաններից մեկում այցելության ժամանակ ասել է. «Գիտեք, որ ձեր կարդինալը և ես հոկտեմբերին տեղի ունեցած ընտրությունների ժամանակ համարյա հավասար էինք ընթանում, մեր անունները հետևում էին մեկը մյուսին, մեկը՝ վերև, մյուսը՝ ներքև, ինչպես եռման ջրի մեջ նետված ոլոռները»:

Այստեղ հետաքրքրական է հիշատակելու մինչև պապական ընտրությունները 1958 թ. գրված Չելսո Բենինո Լուիջի Կոստանտինիի<sup>2</sup> նամակը ուղղված Բենեդետտ Ալոիզի Մազալային<sup>3</sup>, որտեղ նա անհրաժեշտ է համարել ընտրելու կարդինալ Աղաջանյանին որպես Պետրոսի հաջորդ և Աստծո տեղապահի:

Բերենք այդ նամակի իտալերենից հայերեն թարգմանությունը.

«Իմ առողջության լուրջ խնդիրների պատճառով ես չեմ կարող մասնակցել գերապատիվ կարդինալների գլխավոր ժողովին, իմ խոնարհ, բայց ազնիվ պարտքն եմ համարում ներկայացնելու իմ մտքերը Գերագույն քահանայապետի ապագա ընտրությունների վերաբերյալ: Պիոս ԺԲ-ի սուրբ և մեծ հիշատակի ամենահանդիսավոր գործունեության

<sup>1</sup> **Акопян В. З.**, Кардинал Григор-Петрос Агаджанян, Теодицея N 2, 2011, с. 7.

<sup>2</sup> Չելսո Բենինո Լուիջի Կոստանտինին (իտալ. Celso Benigno Luigi Costantini) 1954-1958 թթ. հանդիսացել է Հռոմի եկեղեցու քարտուղարության պետը: Այս պաշտոնում գտնվող հոգևորականը ղեկավարում էր Առաքելական քարտուղարությունը (լատ. Cancellaria Apostolica): 1988 թ. հունիսի 28-ի սահմանադրությամբ (Pastor Bonus) այս վարչական մարմնի ֆունկցիաները փոխանցել է Պետական քարտուղարության ընդհանուր բաժնին:

<sup>3</sup> Բենեդետտ Ալոիզի Մազալան (իտալ. Benedetto Aloisi Masella) 1958-1970 թթ. եղել է Հռոմի Ս. եկեղեցու Կամերլենգոն: Սա Հռոմի եկեղեցում բարձր պաշտոններից մեկն է, որի գործառույթների մեջ է մտնում քաղաքացիական-վարչական ֆունկցիաներ, որոնց շարքից են պապական աթոռի ունեցվածքի և ֆինանսների տիրապետման իրավունքը: Կամերլենգոն գլխավորում է Առաքելական պալատը: Այս պաշտոնն առաջ է եկել 11-րդ դարում և միայն կարդինալները կարող են զբաղեցնել այն:

մասն է կարդինալների սբ. կոլեգիային միջազգային բնույթ տալը: Եվ սա այն պատճառով, որ այդպիսինն է եկեղեցու էական պահանջմունքը՝ միասնական և կաթողիկե: Սբ. կոլեգիայի միջազգայնացումը հանգեցրեց պարզ համակարգի ստեղծմանը՝ դե յուրե և դե ֆակտո:

Ներկայումս սբ. Կոլեգիան, որը կոչված է ընտրելու Պիոս ԺԲ-ի հաջորդին, կազմված է 55 կարդինալներից՝ 37-ն արտասահմանցի և 18-ը իտալացի: Ելնելով սբ. եկեղեցու էական գծերն արտացոլող այս իրավական և փաստացի ստեղծված հանգամանքներից՝ բնականորեն ենթադրվում է ընտրելու Գերագույն Աթոռում ոչ իտալացու:

(Փակագծերում նշեմ, որ արտասահմանում ես շատ անգամներ եմ ստիպված եղել լսել եկեղեցու իտալացման մեղադրանքները “de l’italianisation de l’Eglise”):

Մյուս շատ կարևոր փաստը: Եկեղեցին իր էությամբ հանդիսանում է միսիոներական, սակայն ըստ էության 2000 տարի անց այն միայն կարողացել է հավաքել կես միլիարդ կաթոլիկ: Հարգարժան եղբայրակից կարդինալներ, Կաթոլիկ եկեղեցին իրենից ներկայացնում է փոքրամասնություն: Երբ ծնվում են հինգ երեխա, նրանցից չորսը լույս աշխարհ են գալիս ոչ կաթոլիկ եկեղեցում: Անհրաժեշտ է ընդհանուր առմամբ նորից ընդունել Քրիստոսի առաքելական հրահանգը: Դիվանագետ Պանիկարը՝ Չինաստանի ներկայացուցիչը Փարիզում [իրականում Հնդկաստանի], գրել է վավերագրական գիրք, որում խոսում է կաթոլիկ եկեղեցու անհաջողության մասին Հնդկաստանում և Հեռավոր Արևելքում: Իրականում, չնայած միսիոներների մեծ և գովասանքի արժանի աշխատանքին, մենք կարող ենք հաշվել միայն 10-13 միլիոն կաթոլիկների միլիարդի հասնող հեթանոսների շրջանում: Կիրառվում էր “tabula rasa” մաքուր տախտակ մեթոդը հատկապես Հարավային Ամերիկայում: Մենք ձգտում էինք տարածել արտաքին կրոնական գաղութատիրությունը, այլ ոչ եկեղեցին իր բնական հիերարխիայով: Վերջին Պապերը բարձրացրել են իրենց ձայնը՝ խոսելով միսիոներական բարեփոխումների հրատապ անհրաժեշտության մասին (“Maximum illud” Բենեդիկտոս ԺԵ, “Rerum Ecclesiae” Պիոս ԺԱ, “Evangeliu praedicones” Պիոս ԺԲ): Այսօր ոչինչ չի մնում, եթե ոչ իրականացնելու նրանց առաքելական հրամանները: Ես կարծում եմ, որ վերևում հիշատակվածը մատնանշում է այն թեկնածուին, ով պատասխանում է մեր ժամանակների անհետաձգելի պահանջմունքներին և նա հենց Պետրոս ԺԵ Աղաջանյանն է: Իր էությամբ

նա հանդիսանում է իսկական հռոմեացի, անկասկած, ոչ ավելի պակաս հռոմեացի քան սուրբ Կոլեգիայի յուրաքանչյուր անդամ: Նա այնպիսի թեորապես և պրակտիկ պատրաստվածություն ստացած առաջնակարգ միսիոներ է, որ դժվար թե գտնենք նման մեկ ուրիշ կարդինալի: Նա պոլիգլոտ է, քաղաքավարի, բոլորի կողմից սիրված և հարգված է, ու եռանդուն տարիքում է: Ավելին, նա ներկայացնում է սրբազան միության կապը լատին և արևելյան եկեղեցիների: Մենք չպետք է մոռանանք, որ այդ բախտավոր փաստի մասին մեծահոգաբար հոգացել էր Պիոս ԺԲ-ն:

Հետևապես, ավարտին ահա իմ ծայնը՝ Գերագույն քահանայապետի ընտրության համար առաջարկում եմ կարդինալ Պետրոս ԺԵ Աղաջանյանին, “salvo meliori consilio”<sup>1</sup> Ձերդ պատկառելի գերաշնորհ:

Կարդինալ Չելսո Կոստանտինի:

Հռոմ, 12 հոկտեմբերի 1958 թ.»<sup>2</sup>:

Այս նամակից երևում է Հռոմեական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների վերաբերմունքը կարդինալ Աղաջանյանի նկատմամբ՝ որպես պապի ամենահավանական թեկնածուի: Կարդինալ Աղաջանյանի թեկնածությունը հանդիսանում էր այն կարևոր հանգուցալուծումը, որը կրկին անգամ կմերձեցներ կապը լատին և արևելյան եկեղեցիների միջև:

Բացի սա պիտի փաստել նաև այն հանգամանքը, որ իսկապես այս տարիներին է, որ սկսվեց կարդինալների կոլեգիայի անդամների միջազգայնացում՝ տարբեր ռասաներից ու ազգերից ներկայացուցիչների ընդգրկման քաղաքականության ավելի ընդգրկուն բնույթ ստանալը: Կարդինալ Աղաջանյանը դեռևս 1946 թ. իր հովվական թղթում խոսելով տարբեր ազգությամբ կարդինալների նշանակման մասին փաստել է այն հանգամանքը, որ Պիոս ԺԲ-ն իր որոշումներով ցույց է տալիս «թե՛ հինգ ցամաքամասերն ալ հաւասար են Աստուծոյ Եկեղեցւոյ համար, թե՛ անոր առջեւ խտրութիւն չկայ յաղթական կամ պարտեալ, մեծ կամ փոքր, սպիտակ կամ դեղին ցեղերու մէջ, բոլորն ալ հաւասարապէս գնուած Քրիստոսի անգին Արեամբ, բոլորն ալ որդեգիր Աստուծոյ. զաւակ Ս. Եկեղեցւոյ և Առաքելապետական Գահուն, մայր և արմատ միութեան....»<sup>3</sup>: Չնա-

<sup>1</sup> Յատիներենից՝ առանց վիճարկման ամենալավ որոշումը:

<sup>2</sup> Bruno Fabio Pighin, "Il ritratto segreto del Cardinale Celso Costantini in 10.000 lettere dal 1892 al 1958", Venezia, Marcianum Press, 2012, pagine 649.

<sup>3</sup> Աղաճանեան Գրիգոր Պետրոս ԺԵ, Թուղթ Հովուական, Պեյրուօ, 1946, էջ 5:

յաճ այս հանգամանքը ևս լրացնում է այն քաղաքականությունը, որ արդեն որդեգրվել էր հռոմեական եկեղեցու կողմից:

Չելսո Կոնստանտինիի նամակը բացի մեզ համար հետաքրքրական նյութ պարունակելուց, արժեքավոր է նաև հռոմեական եկեղեցու պատմության համար այն տեսանկյունից, որ հենց եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներն են մատնանշում իրենց հասցեին հնչող մեղադրանքները, և իրենք էլ փորձում են լուծումներ գտնել ու առաջարկել հետագա պատմության ձևավորման համար: Վերոհիշյալ նամակը հրապարակվել է նաև պապական "L'Osservatore Romano" պարբերականում 2012 թ. հունիսի 9-10-ի համարում:

Այսպիսով, կաթոլիկ եկեղեցին 20-րդ դարի երկրորդ կեսից սկսում է ավելի ցայտուն կերպով եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների շարքերում ընդգրկել նաև տարբեր ռասաներից, ազգերից ներկայացուցիչներ, ինչն շարունակվում է առ այսօր: Եվ նաև այս քաղաքականության հետևանքով է նաև, որ կաթոլիկ եկեղեցում կարդինալ Աղաջանյանի համար այդ տարիներին ընձեռվում են լայն հնարավորություններ ծանայելու եկեղեցուն և հավատին:

### **ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ ԺԵ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ ԵՎ 1958 Թ.**

#### **ՊԱՊԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

##### ***Լիլիթ Պողոսյան***

***Քանալի բառեր-*** պապական ընտրություններ, պապաբի, նամակ, թեկնածու, եկեղեցի, կաթոլիկ եկեղեցի, կարդինալ

Հոդվածը վերաբերում է հռոմեական կաթոլիկ և հայ կաթողիկե եկեղեցիների նշանավոր գործիչներից մեկի Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանին: Հոդվածում բերված է իտալերենից հայերեն թարգմանված մի նամակ, որը գրվել էր Չելսիո Կոնստանտինիի կողմից: Նամակում հեղինակը 1958 թվականին կայանալիք պապական ընտրություններում առաջարկում էր կարդինալ Աղաջանյանի թեկնածությունը և արդարացնում այն:



## ГРИГОР-ПЕТР АГАДЖАНЫН И ПАПСКИЕ ВЫБОРЫ В 1958 ГОДУ

*Լիլիտ Սոսոյան*

**Ключевые слова:** *папские выборы, папбил, письмо, кандидат, церковь, католическая церковь, кардинал*

Эта статья про Григорий-Пётр XV Агаджаняна, кто был выдающийся личностью Римско-католической и армяно-католических церквей. Он был армянский куриальный кардинал. Патриарх - католикос Дома Киликийского армян-католиков с 1937 по 1962. 1946 года Папа Пий XII даровал Агаджаняна достоинство кардинала-священника. Он был префект Священной Конгрегации пропаганды веры с 1958 по 1970. В статье есть перевод письма с итальянского на армянский язык, который написан Челсио Костантиним. В письме, автор предлагает кандидатуру кардинала Агаджаняна в предстоящем папском Конклаве в 1958 году, и это оправдывает.

## GRIGOR-PETER AGHAJANYAN AND PAPAL ELECTIONS IN 1958

*Lilit Poghosyan*

**Key words:** *papal election, papabil, letter, candidate, church, Catholic church, cardinal*

The article is about Gregorio Pietro XV Agagianian who a prominent figure of the Roman Catholic and Armenian Catholic churches. He was an Armenian Catholic Cardinal. He was the head of the Armenian Catholic Church (as Armenian Catholic Patriarch of Cilicia) from 1937 to 1962. Agagianian was elevated to the cardinalate in 1946 by Pope Pius XII. Aghajanian was Prefect of the Congregation for the Propagation of the Faith in the Roman Curia from 1958 to 1970. Agagianian was twice considered papabile, during the conclaves of 1958 and 1963. In the article, here is a translation of a letter from Italian into Armenian which is written by Celso Costantini. In the letter, the author proposes the Cardinal Aghajanian's candidacy in the upcoming papal conclave in 1958, and justifies it.